

5.9. Թատերահանդիսային գործումնեությունը 2002 թվականին

2002թ. հանրապետությունում գործել են 21 թատերահանդիսային կազմակերպություններ, որոնցից 12-ը՝ դրամատիկական, 4-ը՝ երաժշտադրամատիկական, 3-ը՝ տիկնիկային, մնացած 2-ը՝ պատաճի հանդիսատեսի թատրոնն է և հայպետկրկեսը:

Երևան քաղաքում գործել են 14, Շիրակի և Սյունիքի մարզերում՝ 2-ական, Արարատի, Գեղարքունիքի և Լոռու մարզերում՝ 1-ական թատերահանդիսային կազմակերպություններ:

Թատերահանդիսային կազմակերպությունների կողմից 2002թ. ցուցադրվել է 1415 (2001թ.՝ 1527) ներկայացում, որոնց 25.6%-ը կամ 362-ը՝ տիկնիկային, իսկ 14.3%-ը կամ 203-ը՝ երաժշտադրամատիկական ժանրի են: Արարատի և Գեղարքունիքի մարզային թատրոնները ներկայացումներ են կազմակերպել նաև իրենց մարզերի գյուղական բնակավայրերում: Արտասահմանում հյուրախաղերով հանդես է եկել 1 թատերային կազմակերպություն, որի ներկայացումների քանակը կազմել է 14:

2002թ. թատրոններ հաճախումների քանակը 2001թ. համեմատ նվազել է 28.4 հազարով և կազմել 279.3 հազ., նրանց 17.4%-ը հաճախել է երաժշտադրամատիկական, 9.6%-ը՝ տիկնիկային թատրոններ: Հանրապետության 1000 բնակչի հաշվով հաճախումները կազմել են 87՝ 2001թ. 96-ի դիմաց:

2002թ. պատրաստվել և հանդիսատեսին է ներկայացվել 54 նոր (2001թ.՝ 36) և 11 հիմնավերականգնված (2001թ.՝ 6) ներկայացում:

Թատերական ներկայացումներից ստացված հասույթը կազմել է 104.6 մլն. դրամ, որի 1.0%-ը կամ 1.1 մլն. դրամը ստացվել է գյուղական վայրերում կազմակերպված ներկայացումներից, 18.7%-ը կամ 19.6 մլն. դրամը՝ երաժշտադրամատիկական, 5.1%-ը կամ 5.3 մլն. դրամը՝ տիկնիկային ներկայացումներից: Միջին հաշվով մեկ ներկայացման մուտքի վճարումներից հասույթը կազմել է 73.9 հազ. դրամ, ընդ որում գյուղական վայրերում այդ ցուցանիշը կազմել է 14.1 հազ. դրամ:

Թատերահանդիսային կազմակերպությունների ընդհանուր ֆինանսական միջոցները 2002թ. կազմել են 682.8 մլն. դրամ, որի 75.9%-ը կամ 518.2 մլն. դրամը՝ ՀՀ պետական բյուջեից, 15.3%-ը (104.6 մլն. դրամ)՝ բնակչությանը մատուցված վճարովի ծառայություններից, 0.9%-ը (6.3 մլն. դրամ)՝ նվիրատվություններից, 2.3%-ը (15.9 մլն. դրամ)՝ վարձակալությունից, 5.6%-ը (37.8 մլն. դրամ)՝ այլ եկամուտներից:

Թատերահանդիսային կազմակերպությունների ֆինանսական ընդհանուր ծախսերը կազմել են 674.9 մլն. դրամ, որի 48.7%-ը կամ 328.4 մլն. դրամը աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումներն են, 7.4%-ը (49.8 մլն. դրամ)՝ նյութական ծախսերը, 8.1%-ը (54.7 մլն. դրամ)՝ ոչ նյութական ծառայությունների վճարումները, 5.6%-ը (37.9 մլն. դրամ)՝ գործուղման ծախսերը, 18.5%-ը (124.9 մլն. դրամ)՝ պարտադիր սոցիալական ապահովագրական վճարները, 0.8%-ը (5.2 մլն. դրամ)՝ հիմնավերանորոգման, գույքի և սարքավորումների ծեռք բերման ծախսերը, 10.9%-ը (73.9 մլն. դրամ)՝ այլ ծախսերն են: Միջին հաշվով մեկ ներկայացման ֆինանսական ծախսերը 2002թ. կազմել են 521 հազ. դրամ:

5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՉՆԵՐ

Պետական մասնագիտացված թատրոններն ըստ ենթակայության և ըստ մարզերի

	Թատրոնների քանակը	այդ թվում՝ ըստ ենթակայության		
		ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություն	համայնքներ	
ք.Երևան	14		12	2
Շիրակ	2		1	1
Լոռի	1		1	-
Արարատ	1		-	1
Գեղարքունիք	1		-	1
Սյունիք	2		-	2
Ընդամենը ՀՀ	21		14	7

Պետական մասնագիտացված թատրոններն ըստ մարզերի

	Թատրոն-ների քանակը	Ներկայացում-ների քանակը	Նանդիսատեսներ ի թվաքանակը, հազ. մարդ	Ստացված հասույթը, հազ. դրամ	Նաճախողների թվա- քանակը մեկ ներկա- յացման հաշվով, մարդ
ք.Երևան	14	1099	223.2	96033.6	203
Արարատ	1	95	11.4	2402.3	120
Գեղարքունիք	1	30	3.2	48.0	107
Լոռի	1	49	8.4	1977.7	171
Շիրակ	2	99	20.5	3595.1	207
Սյունիք	2	43	12.6	591.2	293
Ընդամենը ՀՀ	21	1415	279.3	104647.9	197